1575

# ԾՐԱԳԻՐ ԿՐՕՆԻ

## ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՒԹ-ԴԱՍԱՐԱՆԵԱՆ

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Էլեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ

1916

12369

# ԾՐԱԳԻՐ ԿՐՕՆԻ

## ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՒԹ-ԴԱՍԱՐԱՆԵԱՆ

## ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Էլեկտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ
1916

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Է.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց

Հաստատելով պատուիրեմ տալ
ի գործադրութիւն.
26 Մարտի 1916 ամի
Ս. Էջմիածին.
ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԾՐԱԳԻՐ ԿՐՕՆԻ

## ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՒԹ-ԴԱՍԱՐԱՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

## ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԾՐԱԳՐԻ

Կրօնի դասաւանդութեան նպատակն է աշակերտների մէջ զարթեցնել և զարգացնել կրօնական–բարոյական զգացումը և հիմք դնել կրօնական–բարոյական աշխարհայեցողութեան։

Դորա համար անհրաժեշտ է կրօնական և բարոյական արժէքների հիմնական տարրերն այն չափով ըմբռնելի կացուցանել, որ նոցա ճշմարտութիւնն առանց այլ և այլութեան արմատանայ աշակերտների գիտակցութեան մէջ։ Այդ նպատակին հասնելու ամենալաւ ճանապարհն է կրօնական կեանքի զարգացման կամ պատմութեան ընթացքն ուսուցանելը, որի ժամանակ գլխաւոր ուշադրութիւնը պէտք է դարձնել այն ամենի վրայ, ինչ որ կրօ-

նական-բարոյական տեսակէտով արժէքաւոր է և կարող է խթան լինել նոր կեանք առաջացնելու։ Ուրեմն պէտք է կենդանի կերպով նկարագրել և նկարագրել տալ աշակերտներին այնպիսի անձնաւորութիւնների հոգեկան կեանքը, որոնք կրօնական-բարոյական գաղափարի մարմնացումն են կամ ստեղծել ու զարգացրել են կրօնական-բարոյական արժէքներ։ Այդ բանն այնքան աւելի կյաջողուի, որքան աշխատանք գործ դրուի ըստ կարելւոյն հաւատարիմ մնալու ս. Գրքի բնագրին, որը ամենագլխաւոր աղբիւրն է Կրօնի ուսուցման։

Կրօնի դասաւանդութեան համար հիմք ընդունելով այս հայեացքը, ամբողջ ուսուցման ծրագիրը բաժանուած է ըստ այսմ։

## Ա. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
### ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ

I Աղօթքներ. *1) Յանուն Հօր. 2) Տէրունական աղօթք. 3) Զգործս ձեռաց մերոց։*

II Տօնական պատմութիւններ. *1) Ս. Կոյս Մարիամի ծնունդը և տաճարին ընծայուիլը. 2) Աւետումն. 3) Քրիստոսի ծնունդը. 4) Տեառնընդառաջ. 5) Յովհաննէս Մկրտիչ. 6) Յիսուսի մկրտութիւնը. 7) Յիսուսի մուտքը Երուսաղէմ. 8) Խորհրդաւոր ընթրիք և Յուդայի մատնութիւը. 9) Յիսուս Գեթսեմանի պարտիզում. 10) Յիսուսի չարչարանքը, խաչելութիւնը, մահը և թաղումը. 11) Յիսուսի յարութիւնն ու համբարձումը. 12) Հոգեգալուստ*

III Բարոյախօսական զրոյցներ։

## Բ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
### ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ

I Աղօթքներ. *1) Աչք ամենեցուն. 2) Սուրբ Աստուած։*

II Պատմութիւններ Հին ուխտից. *1) Աշխարհի և մարդու ստեղծագործութիւնը. 2) Առաջին մարդիկ դրախտում. 3) Աբրահամի պատմութիւնը. 4) Յովսէփի պատմութիւնը. 5) Մովսէս մարգարէի ծնունդը. 6) Իսրայէլացիք անցնում են Կարմիր ծովը. 7) Սինայի օրէնսդրութիւնը. Տասն պատուիրաններ։*

III Պատմութիւններ Նոր ուխտից. *1) Յիսուս բժշկում է անդամալոյծին. 2) Յիսուս բժշկում է դիւահարներին. 3) Ղազարոսի յարութիւնը. 4) Սերմանացանի առակը. 5) Ողորմած Սամարացու առակը. 6) Անառակ որդու առակը. 7) Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը. 8) Փարիսեցին և մաքսաւորը. 6) Քանքարների առակը. 10) Յիսուս օրհնում է մանուկներին։*

## Գ. ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
### ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ

I Պատմութիւններ Հին ուխտից. *1) Դատաւորներ. 2) Սաւուղ ընտրւում և օծւում է թագաւոր. 3) Դաւթի թագաւոր օծուիլը. 4) Դաւիթ և Գողիաթ. 5) Սողոմոնի իմաստութիւնը. 6) Տաճարի շինութիւնը։*

II Պատմութիւններ Նոր ուխտից. *1) Որոմի առակը. 2) Կորած ոչխարի և դրամի առակը. 3) Այգու մշակների առակը. 4) Տասն կոյսերի առակը։*

III *Հատընտիր կտորներ հայոց Եկեղեցու պատմութիւնից. 1) Հայաստանի առաջին լուսաւորիչները՝ Ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներ. 2) Ս. Գրիգոր Լուսաւորիչ. 3) Հռիփսիմեան կոյսերի Հայաստան գալը և նահատակուիլը. 4) ս. Գրիգորի Վիրապից ելնելը և հայոց դարձը. 5) Էջմիածնի տաճարի շինութիւնը. ս. Էջմիածնի շարականը. 6) ս. Սահակ և ս. Մեսրովբ։ 7) Վարդանանց պատերազմը։ Հայոց եկեղեցու Նուիրապետութիւնը։*

## Ա. ԴԱՍԱՐԱՆ

Սրբազան պատմութիւն Հին ուխտի. *1) Աշխարհի ստեղծագործութիւնը. 2) Դրախտ և պատուիրանազանցութիւն. 3) Կայէն և Աբէլ. 4) Ջրհեղեղ. 5) Բաբելոնի աշտարակաշինութիւն. 6) Աստուած կանչում է Աբրահամին. 7) Աբրահամ բաժանւում է Ղովտից. 8) Ղովտի ազատութիւնը. 9) Աստծու խոստումն Աբրահամին. 10) Աբրահամը բարեխօսում է Աստծուն. 11) Սոդոմ և Գոմոր քաղաքների կործանումը. 12) Իսահակի ծնունդը և զոհուիլը. 13) Ի-*

սահակի ամուսնութիւնը. 14) Եսաւ և Յակոբ· 15) Յակոբի փախուստը Միջագետք· 16) Յակովբի տեսիլքը· 17) Յակովբը Լաբանի մօտ. 18) Յակովբի դարձը և եղբայրների հաշտութիւնը. 19) Յովսէփի պատմութիւնը· 20) Յովսէփը Եգիպտոսում· 21) Յակովբը տեղափոխւում է Եգիպտոս· 22) Յակովբի օրհնութիւնն ու մահը: 23) Իսրայէլացոց նեղութիւններն Եգիպտոսում Յովսէփի մահից յետոյ· 24) Մովսէսի ծնունդն ու ազատութիւնը· 25 Մովսէսի փախուստը· 26) Աստուած կանչում է Մովսէսին· 27) Եգիպտոսից դուրս գալը. 28) Կարմիր ծով անցնելը. 29) Սինայի օրէնսդրութիւնը. 30) Ոսկէ հորթը· 31) Լրտեսներ· 32) Անապատի կեանքը և Մովսէսի մահը· 33) Յեսուն նուաճում է Քանանը· 34) Հեղի և Սամուէլ. 35) Հռութ. 36) Սաւուղը թագաւոր· 37) Սաւուղի անհնազանդութիւնը· 38) Դաւթի ընտրութիւնը· 39) Դաւիթը Սաւուղի արքունիքում· 40) Դաւթի թագաւորութիւնը. 41) Աբիսողոմ. 42) Սողոմոնի թագաւորութիւնը. 43) Տաճարի շինութիւնը. 44) Սողոմոնի բարձրանալն ու անկումը 45) Թագաւորութեան բաժանումը. 46) Եղիա մարգարէ. 47) Իսրայէլի և Յուդայի տան կործանումը. 48) Բաբելոնի գերութիւնը. 49) Վերադարձ և տաճարի երկրորդ շինութիւնը. 50) Հրէաները մակեդոնական և սելեկեան իշխանութեան ներքոյ. Անտիոքոս Եպիփանէսի հալածանքը և Մակաբայեցիներ:

---

## Բ· ԴԱՍԱՐԱՆ

Սրբազան պատմութիւն Նոր ուխտի. *1) Աւետումն և ծնունդ Յիսուսի Քրիստոսի. 2) Մոգերի երկրպագութիւնը. 3) Փախուստ Եգիպտոս և վերադարձ. 4) 40-օրական Յիսուսը տաճարում. 5) 12 տարեկան Յիսուսը տաճարում. 6) Յովհաննէս Մկրտչի ծնունդն ու քարոզութիւնը. 7) Յիսուսի մկրտութիւնը և փորձութիւնը. 8) Առաքեալների ընտրութիւնը. 9) Լերան քարոզը. 10) Անդամալոյծի բժշկութիւնը Կափառնայում քաղաքում. 11) Դիւահարի բժշկութիւնը. 12) Յիսուսի հայեացքը պահեցողութեան, լուացման և շաբաթի մասին. 13) Ողորմած Սամարացու առակը. 14) Սերմանացանի առակը. 15) Որոմի առակը. 16) Մանանեխի հատիկի և թթխմորի առակը. 17) Յիսուսն ուղարկում է իր աշակերտներին քարոզելու. 18) Յովհաննէսի աշակերտների հարցը և Յիսուսի պատասխանը: 19) Պետրոսի խոստովանութիւնը Փիլիպեայ Կեսարիայում. 20) Աշակերտները վիճում են, թէ ով է մեծ երկնքի արքայութեան մէջ. 21) Փարիսեցին և մաքսաւորը. 22) Կորած ոչխարի և դրամի առակը. 23) Անառակ որդու առակը. 24) Չար ծառայի առակը. 25) Փարիսեցիների հարցն ապահարզանի մասին. 26) Յիսուս և մանուկները. 27) Հարուստ երիտասարդը. 28) Այգու մշակների առակը. 29) Մաքսաւոր Զակքէոսը. 30) Քանքարների առակը. 31) Անմիտ հարուստը. 32) Մեծ ընթրիքի առակը. 33) Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը. 34) Տասն կոյսեր. 35) Վերջին դատաստանի մասին. 36) Յիսուս և Սամարացի կինը. 37) Քանանացի կինը. 38) Կափառնայումի հարիւրապետը. 39) Յիսուսի օծումը Բեթանիայում. 40) Յիսուս մտնում է Երուսաղէմ. 41) Վէճ հակառակորդների հետ—իշխանութեան, կայսեր տալիք հարկի, յարութեան մասին. 42) Յուդայի մատնութիւնը. 43) Ոտնլուայ և խորհրդաւոր ընթրիք. 44) Յիսուս Գեթսեմանի պարտիզում. 45) Յիսուս քահանայապետի առաջ և Պետրոսի ուրացութիւնը. 46) Յիսուս Պիղատոսի առաջ. չարչարանք, խաչելութիւն և մահ. 47) Յիսուսի թաղումն ու յարութիւնը. 48) Համբարձումն և հոգեգալուստ:*



---

## Գ· ԴԱՍԱՐԱՆ

Գործք Առաքելոց եւ Կաթուղիկէ Եկեղեցու հաստատութիւնը. *1) Հոգեգալուստ և առաջին քրիստոնէայ համայնքը. 2) Կաղի բժշկութիւնը և առաջին հալածանք առաքեալների դէմ. 3) Անանիա և Սափիրա. 4) Առաքեալների բանտարկութիւնը և դատը. Գամաղիէլի խորհուրդը. 5) Եկամուտ և բնիկ հրէաներ. 7 Վերակացուների ընտրութիւնը և Ստեփաննոսի վկայութիւնը. 6) Փիլիպպոսը Սամարիայում. Եթովպացի ներքինին. Սիմոն մոգ. 7) Սաւուղի դարձը. 7) Կոռնելիոս հարիւրապետը. 9) Յակովբոսի մարտիրոսական մահը և Պետրոսի ազատութիւնը. 10) Սաւուղի առաջին առաքելական ուղեւորութիւնը. 11) Հեթանոս քրիստոնեաների խնդիրը և Երուսաղէմի ժողովը. 12) Պօղոսի առաքելական երկրորդ և երրորդ ուղեւորութիւնը. 13) Պօղոսի կալանաւորումը և ուղեւորութիւնը Հռոմ. 14) Պետրոս և Յովհաննէս առաքեալների գործունէութիւնն ու մահը: 15) Քրիստոնէութեան տարածումը առաջին երեք դարերում և տարածման նպաստող հանգամանքները. 16) Գլխաւոր կենտրոնները (Անտիոք, Փոքր Ասիա, Զմիւռնիա,*

Եփեսոս, Հայաստան, Աղէքսանդրիա, Հռովմ և Լիոն.). 17) Հեթանոս աշխարհի հալածանքը զէնքով և գրչով, վկաներ և ջատագովներ (Պոլիկարպոս Զմիւռնիացի, Իրենէոս, Յուստինոս և Տերտուլիանոս). 18) Քրիստոնէական եկեղեցու ներքին կեանքն ու կազմակերպութիւնը (Եպիսկոպոս, երէց, և սարկաւագ. պաշտամունք)։

Համառօտ գիտելիք Աստուածպաշտութեան մասին (եկեղեցու շէնքն ու մասերը, խորհուրդները, ժամակարգութիւնը և նուիրապետութիւնը)։

---

## Դ. ԴԱՍԱՐԱՆ

### Կրօնական գաղափարների զարգացումը Իսրայէլի ժողովրդի եւ հրէաների մէջ եւ Յիսուսի աւետարանը.

1) Իսրայէլի ժողովրդի պատմական սկզբնաւորութիւնը. տարբեր ցեղերի միացումը և մի ժողովուրդ կազմելը. Մովսէս մարգարէի դերն ու նշանակութիւնը. Եհովան Իսրայէլի Աստուած և Իսրայէլը՝ Եհովայի ժողովուրդ։ Մի Աստուծոյ գաղափարը։

2) Իսրայէլի ժողովուրդը Քանանում. փորձ Իսրայելացիներին դուրս քշելու Քանանից. Դեբովրա և Բարակ։ Ընդհարումն Փղշտացոց հետ և Թագաւորութեան հաստատութիւնը. առաջին Թագաւորները։ Քանանի քաղաքակրթութեան և կրօնի ազդեցութիւնը Իսրայէլի ժողովրդի վրայ։ Եղիա և Եղիսէ մարգարէները և նոցա բողոքը քանանականութեան դէմ։

3) Մարգարէների կրօնը։— ա. Սամարիայի կործանումը. Ամովս և Ովսիա մարգարէներ։ բ. Յուդայի փրկութիւնը. Եսայի մարգարէ և մարգարէական բարեփոխութիւնը։ գ. Երուսաղէմի կործանումը և Երեմիա մարգարէ։ դ. Հրէաները գերութեան մէջ և Եզեկիէլ մարգարէ։ ե. Կիւրոսի յաջողութիւնը և Եսայի Խ. գլ. շարունակութիւնը։ զ. Հրէաների վերադարձը գերութիւնից և նոր համայնքի կազմակերպութիւնը. Եզրաս և Նեհեմիա։ է. Հրէական համայնքի կրօնն ու բարեպաշտութիւնը և ներքին ու արտաքին դրութիւնը Քրիստոսի ծննդեան ժամանակ։ ը. Կուսակցութիւններ։

4) Յիսուս Քրիստոսի քարոզը կամ Աւետարանը։

---



## Ե. ԴԱՍԱՐԱՆ

### Հայոց Եկեղեցական Պատմութիւն.

Ներածութիւն. Համառօտ ակնարկ հայոց հեթանոսական անցեալի և կրօնի մասին՝ քրիստոնէութիւն ընդունելուց առաջ։

I Քրիստոնէութեան հաստատութիւնն ու կազմակերպութիւնը Հայաստանում ընդհանրական եկեղեցու շրջանում.—1) Հայոց առաջին դարձն ի քրիստոնէութիւն. Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալներ և այլ աւանդութիւններ ու պատմական տեղեկութիւններ. 2) Գրիգոր Լուսաւորիչ և հայոց ազգովին քրիստոնեայ դառնալը. Լուսաւորչի որդիների և թոռների գործունէութիւնը։ 3) Ներսէս Մեծ և իր գործերը։ Ասորոց և յունաց եկեղեցիների հակաազդեցութիւնը Հայաստանում. յարաբերութիւնների ընդհատումը Կեսարիոյ աթոռի հետ։ 4) Հայոց հայրապետները և Արշակունիներ։ 5) ս. Սահակ Պարթև և Արշակունիների անկումը. Մեսրոպ Մաշտոց և թարգմանիչներ. հայոց Գրականութեան սկզբնաւորութիւնը։ 6) Մծղնէից աղանդը և մաքառումն նրա դէմ. Շահապիւանի ժողովը։ 7) Կրօնական պատերազմներ պարսից դէմ Ե. դարում։ Վարդան և Վահան Մամիկոնեաններ։ Գիւտ կաթուղիկոս և Յովհան Մանդակունի։

II Հայոց եկեղեցու դիրքը դաւանական վէճերի մէջ եւ ազգայնացումը.—1) Համառօտ ակնարկ առաջին երեք տիեզերական ժողովների մասին. Քաղկեդոնի ժողովը և հետևանքները։ Հայ և Յոյն եկեղեցիների ընդհատումը Զ. դարի սկզբին։ Մաքառումն Նեստորականութեան դէմ։ 2) Հայոց եկեղեցու ազդեցութեան զօրանալը։ Քրիստափոր Ա. և Ներսէս Բ.։ Միութիւն Ասորիների հետ։ 3) Հայոց եկեղեցու դրութիւնը Զ. դարու վերջին և Է.-ի սկզբին։ Սիւնեաց և Աղուանից շարժումները. Վրաց բաժանումը։ Մովսէս, Վրթանէս տեղապահ և Աբրահամ կաթուղիկոս։ Կոմիտաս կաթուղիկոսի գործունէութիւնը։ 4) Բիւզանդական Հերակլ կայսրը և Հայ ու Յոյն եկեղեցիների միութեան փորձեր. Եզր կաթուղիկոս և միակամեաց խնդիր. Կարնոյ ժողով։ Ներսէս Գ. Շինող. Դուինի ժողով։ Արաբական արշաւանքները. Սահակ Գ. Ձորափորեցի։ 5) Աղանդներ Ը. դարու սկզբին. Յովհան Օձնեցի և իր գործերը։ Մանազկերտի ժողովը։

III Հայոց եկեղեցին արաբական տիրապետութեան տակ եւ Բագրատունեաց շրջանում.—*1) Շրջանի բնորոշումը. հայոց նախարարութիւնները և եկեղեցին, Բագրատունեաց զօրանալը. Կոստանդնուպոլսի Փոտ պատրիարքը և Հայոց Զաքարիա կաթուղիկոսը: Գէորգ Բ. Գառնեցի և Բագրատունեաց թագաւորութեան սկիզբը: 2) Անանիա Մոկացի և իր յաջորդները Բագրատունեաց թագաւորութեան ծաղկեալ շրջանում: 3) Պետրոս Գետադարձ և Խաչիկ Բ.: Բագրատունեաց թագաւորութեան անկումը 4) Թոնդրակեցիներ:*

---

## Զ. ԴԱՍԱՐԱՆ

### Հայոց Եկեղեցական Պատմութիւն.

IV Հայոց Եկեղեցին Ռուբինեանց շրջանում. միութեան փորձեր Յոյն եւ Լատին եկեղեցիների հետ.—*1) Քաղաքական նոր պայմաններ և ընդհանուր տեսութիւն Հայոց վիճակի մասին Կիլիկիայում. հայրապետական աթոռի աստանդականութիւնը: 2) Պահլաւունիների տան կաթուղիկոսները (Գրիգոր Գ. Վկայասէրը, Գրիգոր Բ. Պահլաւունի, Ներսէս Շնորհալի, Գրիգոր Դ. Տղայ, Գրիգոր Ե. Քարավէժ և Գրիգոր Զ. Ապիրատ). միութեան փորձեր և արևելեան վարդապետները: 3) Ռուբինեանց թագաւորութիւնը. Յովհաննէս Մեծաբարոյ և Դաւիթ. Վրահայոց խնդիրը: 4) Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Լատին եկեղեցու հետ. Կոստանդին Բարձրաբերդցի և Գրիգոր Անաւարզեցի: Սսի և Ադանայի ժողովները. 5) Ունիթօութիւն և մաքառումն նրա դէմ: Յովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի:*

I Հայրապետական աթոռի փոխադրութիւնը ս. Էջմիածին եւ վերանորոգութեան փորձեր.—*1) Ռուբինեանց թագաւորութեան անկումը և հայրապետական աթոռի փոխադրութիւնը ս. Էջմիածին: Կիրակոս Վիրապեցի և Գրիգոր Մակուեցի. 2) Սիւնեաց անապատի հաստատութիւնը և վերանորոգութեան փորձեր. Փիլիպպոս Աղբակեցի, Մովսէս Սիւնեցի և Յակոբ Ջուղայեցի: 3) Կաթոլիկութեան քարոզութեան զօրանալը Հայաստանում: Եղիազար, Նահապետ, Աղէքսանդր Ա. և Ղազար Ջահկեցի կաթուղիկոսներ: Իսրայէլ Օրու գործունէութիւնը և յարաբերութիւնը այս շրջանի կաթուղիկոսների հետ: 5) Սիմէօն Երևանցի և Ղուկաս Կարնեցի. Գաղթավայրեր և Նուիրակութիւն: 5) Մխիթար Սեբաստացի և*



*նորա միաբանութիւնը: 6) Կաթոլիկ և բողոքական հայ համայնքներ:*

II Հայոց հայրապետութիւնը Ռուսաստանի տիրապետութեան ներքոյ.—*1) Դաւիթ-Դանիէլեան խռովութիւնները. Յովսէփ Արղութեանի դերը. Ռուսաց կառավարութեան միջամտութիւնը և ազդեցութիւնը հայոց կաթուղիկոսութեան գործերում: Էջմիածնի Սիւնհոդոսը: 2) Եփրեմի կաթուղիկոսութիւնը: Ներսէս Աշտարակեցու դերը. Եփրեմի հրաժարականը: 3) Յովհաննէս Ը. Կարբեցի և Պոլոժէնիայի հաստատութիւնը: Ներսէս Ե. Աշտարակցի 4) Մատթէոս Ա., դպրոցական գործը սրա ժամանակ. Գէորգ Դ. Մեծագործ և Մակար կաթուղիկոսներ: 5) Ընդհանուր ակնարկ հայոց եկեղեցու մասին՝ Ի. դարու շէմքին:*

---

## Է. ԴԱՍԱՐԱՆ

### Կրօնների Պատմութիւն.

(Համեմատական եղանակով վեր հանել Քրիստոնէութեան առաւելութիւնն ու բացարձակութիւնը կրօնական-բարոյական խնդիրներում)

*1) Կրօնի սկզբնաւորութիւնն ու նախնական ազգերի կրօնը:*

*2) Եգիպտական և Ասորա-բաբելական կրօններ:*

*3) Իրանական կրօն. Զրադաշտի ուսմունքը չարի և բարու.*

*4) Հնդկական կրօն. համառօտ տեսութիւն Վեդայի և Բրահմանականութեան. կանգ առնել գլխաւորապէս Բուդդայականութեան վրայ, համեմատելով Քրիստոնէութեան հետ:*

*5) Չինական և Ճապոնական կրօններ (Կոնֆուցիանիզմ, Տաօ և Շինտօ):*

*6) Յունական և հռովմէական կրօններ:—Համառօտ տեսութիւն այդ կրօնների սկզբնական շրջանի մասին: Կանգ առնել յունական կրօնի կրօնափիլիսոփայութեան շրջանի վրայ (Սոկրատ, Պլատոն, Ստոյիկեաններ և այլն), համեմատելով քրիստոնէութեան հետ:*

*7) Իսլամ և նրա կախումը հրէութիւնից և քրիստոնէութիւնից:*

---

## Ը. ԴԱՍԱՐԱՆ

1) Քրիստոսի վարդապետութիւնը և քրիստոնէութիւնը իբրև բացարձակ և ճշմարիտ կրօն։

2) Հայոց եկեղեցու դաւանանքը։

4) Քրիստոնէական բարոյագիտութիւնը.

ա) Բնական կեանք և բարոյական մտածողութիւն։

բ) Քրիստոնէական բարոյական կեանքի զարգացումը։

1) Քրիստոնէի նպատակը աշխարհում. 2) Քրիստոնեան ամուսնութեան և ընտանիքի մէջ. 3) Քրիստոնեան հասարակութեան և պետութեան մէջ։ 4) Քրիստոնէական ընաւորութիւն, առաքինութիւն և պարտք։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL010990